

Սփիւռֆի կառոյցները չեն կրնար միայն բեմ ըլլալ, մոր սերունդը ինչպէ՞ս կրնայ յայտնաբերել իր դերը, արտայայտել իր ձայնը եւ ի գործ դնել կարողութիւնները

ՃԿՈՒՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԵՂՐՈՆ

Համայնքային կազմակերպութիւնները չեն յարմարել ժամանակներու փոփոխութիւններուն, չեն արդիականացած եւ չեն ցուցնել մերօրեայ մտածելակերպը - Եթէ կառոյցները լուրջ են իրենց առաքելութեան մէջ, ապա պէտք է դուրս գան միապաղաղ աւանդութիւններու սահմաններէն, ընդարձակեն իրենց տեսլականը եւ ստեղծեն ներառական ու ստեղծագործ միջավայրներ

Տ.ԲԹ. ՀՐԱՋ ԶԻԼԻՆԿԻՆԵԱՆ*

Քանի մը ամիս առաջ, «Սփիւռքի մեծ բացական» ղեկավարութիւն» (1) վերնագրով յօդուածի մը մէջ անդրադարձած էի, թէ ինչպէս սփիւռքի «զասական» կազմակերպութիւնները խոր ճգնաժամի մէջ են, թէ սփիւռքեան ղեկավարութեան քանակական եւ որակական նսարացումը հիմնական ու գոյութեանական խնդիր է եւ կառոյցները չեն յարմարած 21-րդ դարու իրականութիւններուն: Առանց արմատական ինքնաքննադատութեան, երիտասարդներու եւ կանանց ներգրւուման, բաց երկխոսութեան եւ ժամանակակից աշխատելակերպի որդեգրման՝ կառոյցները դատապարտուած են աստիճանաբար կազմալուծուելու: Միասնականութեան մասին դատարկ կարգախօսերը գործնական քայլերով պէտք է փոխարինուին՝ նոր տեսլականով ու նոր առաջնորդներով՝ հիմնուած վստահութեան, արդիական մեթոտներու եւ համագործած ջանքերու վրայ:

Այս յօդուածին մէջ կը փափաքեմ առանձնապատուկ ուշադրութիւն դարձնել երիտասարդութեան վրայ եւ որոշ գործնական առաջարկներ ընել:

Անուրանալի է, որ տասնամեակներու

ընթացքին, սփիւռքեան ազգային կամ համայնքային կառոյցները - եկեղեցին, միութիւններ, կուսակցութիւններ, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններ- համայնքային կեանքի ողնաշարը եղած են: Անոնք ջանքած են հայրենասիրական ոգի, փոխանցած են հօգեւոր դաստիարակութիւն, մշակոյթ ու լեզու եւ ստեղծած են պատկանելիութեան մթնոլորտ մը աշխարհի տարբեր ծագելու տարածուած հազարաւոր հայերու համար: Սակայն, ժամանակները փոխուած են: Նոր սերունդի մտածելակերպը, աշխարհահայեացքն ու սպասումները այլ են: Իսկ անպատասխան կը մնայ հարցումը մը. սերունդներու այս կամուրջը ինչպէ՞ս պիտի կերտուի կամ ձեւաւորուի:

ԿԱՌՈՅՐԸ ՄԻՋՈՑ Է, ՈՉ ՂԱՍԱԿ

Առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել պարզ, բայց, կարեւոր իրողութիւն մը՝ ազգային կառոյցները ինքնին նպատակ չեն: Ակումբը, միութիւնը կամ կուսակցական կառոյցը միջոցներ են, ո՛չ թէ վերջին կայարան: Այդ կառոյցները կը գործեն որպէս անցումային օղակներ, որոնք մարդը կը կապեն իր ինքնութեան, մշակոյթին ու արմատներուն: Սակայն, երբ կառոյցը դառնայ ինքնանպատակ՝ առանց հաշուի

առնելու, թէ ո՞վ ներգրաւուած է եւ ինչո՞ւ, ահ կը դադրի կենսունակ եւ իմաստալից ըլլալէ:

Շատ յաճախ հայկական կազմակերպութիւններու քննարկումներուն մէջ բացակայ է այս ճշմարտութիւնը: Կարծրացած է այն ենթադրութիւնը, որ «ակումբը» կամ «համայնքային կեդրոնը» կամ նոյնիսկ եկեղեցին՝ բոլորին կողմէ նոյն կերպ կը մեկնաբանուի՝ կամ բոլոր «օգտատէէները» նոյն հետաքրքրութիւնը, ակնկալութիւնները ունեն, նոյն գնահատականը կ'ընեն: Որեւէ լուրջ կազմակերպութեան մը ղեկավարութիւն պէտք է ունենայ այն խոնարհութիւնն ու իրատես կամքը՝ հարց տալու համար, թէ «ի՞նչ կ'ուզեն մեր երիտասարդներն ու նորահաս սերունդները, ի՞նչ կ'անկալեն տեսնել մեր կազմակերպութիւններուն մէջ»:

ՓԱՍՏԵՐԸ ԻՆՉ ԿԸՍԵՆ

Ըստ վերջին տարիներու հայկական սփիւռքի մէջ կատարուած ուսումնասիրութիւններուն (2)՝ սփիւռքի կազմակերպութիւններու զերին մասին 16-35 տարեկան հայ երիտասարդներուն մօտ քանի մը կարեւոր մտածումներ կը նկատուին: Շատեր յատկապէս անջատուած կը զգան համայնքային կազմակերպութիւններէն եւ անոնց առաջնորդներէն: Օրինակ՝ Մոնրէալի մէջ, Քեպլէք ծնած երիտասարդուհի մը կ'ըսէ, թէ հայկական վարժարանին

մէջ չէր կրնար ընդունուած կառոյցի կարծիքն տարբեր կարծիք յայտնել: Թոյլատրելի չէր: Ըստ 2019-ին Արժանիքի, Գանատայի եւ Լիբանանի մէջ կատարուած ուսումնասիրութեան՝ 16-24 տարեկաններու 84 տոկոսը եւ 25-34 տարեկաններու 76 տոկոսը հայկական քաղաքական կուսակցութիւններու հետ կապ չունէր: Նոյն երեւոյթը 2022-ին արձանագրուած է նաեւ ԱՄՆ-ի եւ Թորոնթոյի մէջ, ուր բոլոր տարիքի մասնակիցներու մեծ մասը՝ յատկապէս երիտասարդները, համայնքային կուսակցական կազմակերպութիւններուն մէջ գործուն մասնակցութիւն չունէին:

Երիտասարդներու մեծ մասին համար համայնքային կազմակերպութիւններու ծրագիրները հետաքրքիր չեն: Ըստ 2019-ի ուսումնասիրութեան՝ 34 տոկոսը նշած էր, որ երիտասարդներու հետաքրքրութիւններուն անհամապատասխան ծրագիրներն էին: 16-24 տարեկաններու 56 տոկոսը առաջնահերթ կը նկատէր հայոց պատմութեան, լեզուի, արուեստի, երաժշտութեան, հայկական խոհանոցի եւ պարի շուրջ դասախօսութիւններու եւ միջոցառումներու կազմակերպումը: Նմանապէս, ըստ 2022-ին Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ կատարուած հարցախոյզի արդիւնքներուն՝ «երիտասարդ-

ներու համար հետաքրքրական միջոցառումներու բացակայութիւնը» հիմնական խնդիր էր 18-24 տարեկաններու (46 տոկոս) եւ 25-34 տարեկաններու (34 տոկոս) համար:

Կարճ խօսքով, այս տարիքային խումբերը կը զգան, թէ չեն ներկայացուիր եւ հեռացած են աւանդական կառոյցներէն: Ուրակական հարցազրոյցներու ընթացքին երիտասարդ մասնակիցներ նշած են, որ համայնքային կազմակերպութիւնները չեն յարմարել ժամանակներու փոփոխութիւններուն եւ չեն արտայայտել ամբողջ համայնքի կարծիքը: Շատեր կը նշեն, որ կուսակցութիւնները եւ աւանդական կառոյցները չեն արդիականացած եւ չեն արտացոլել նոր սերունդի մտածելակերպը: Այդուհանդերձ, կրթական եւ մշակութային ծրագիրներուն կատարման հետաքրքրութիւնը շատ բարձր է: 2022-ին, Թորոնթոյի հարցախոյզը ցոյց տուած է, որ 18-24 եւ 25-34 տարեկան երիտասարդներու համար «համայնքի տարանջատումը» կը մնայ հիմնական մտահոգութիւն:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻՆԸ ԼՍԵԼ, ՈՉ ԹԷ ԵՆԹԱԿԵԼ

Բազմաթիւ կազմակերպութիւններ կ'ենթադրեն, որ եթէ իրենք որոշ ծրագիրներ յղանա եւ ստեղծեն՝ զեղեցիկ ափիշներով եւ խելացի շուկայնացումով (marketing-ով), ապա երիտասարդները ինքնաբերա-

● շար. Դ. Էջ

ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՐԳԱՎԱՆՈՒԹԻՒՆՍ

ԳԵՈՐԳ ՊԵՏԻՆԵԱՆ

Հակառակ անոր, որ ողորմած մայրս Պոլին ծնած էր, մենք, երեք եղբայրներով, մեր մանկութեան, պատանեկութեան եւ վաղ երիտասարդութեան տարիներուն, մեր տան մէջ եւ կամ նոյնիսկ եօթը՝ դրացիներով խնոցուած բազմամարդ բակէն ներս, թրքերէնով խօսակցութեան կամ թրքերէնով արտայայտութիւններու, շատ քիչ հանդիպած էինք: Նաեւ յիշեմ. երբեք կը պատահէր, որ ծնողքս կամ մեր դրացիները, մեր իսկ ներկայութեան իրարու գաղտնի «բաներ» մը ուզէին խօսիլ, այն ժամանակ միայն անոնց բերնէն մեզի բոլորովին անձանթով այս լեզուն կը լսէինք: Ու մենք՝ փոքրիկ, կուսած ըլլալով՝ որ այդ խօսքերը կամ ակնարկութիւնները մեզի համար բոլորովին անհասկնալի էին, հարցական աչքերով իրարու երես կը նայէինք, եւ ապա անմեղօրէն բարձրաձայն կը խնդալինք:

Աւելին.՝ նախակրթարանի տարիներուս, երբ մօրս ընկերակցելով մեր տան մօտ գտնուող մեծ շուկան կ'երթայի, խնդ մայրս բաւականաչափ արաբերէն չգիտնալուն, իր միտքը թրքերէնով կը պարզէր «հա՛մ Աճմա՛տ» նպարավաճառին, կամ հազագործ Պուրսին: Միայն այսքան: Ո՛չ աւելի եւ ո՛չ պակաս:

Ապա յետոյ, տարուէ տարի, եւ ինքնաբերաբար, փողոցին, ընկերներէն, եւ շուկայէն, արաբերէնին նման, նաեւ սորված էինք այս «նոր» լեզուն «գարդարուն» բառերն ու ասացումները, եւ յատկապէս՝ հայհոյանքները: Մէկ խօսքով՝ փշրանք մը թրքերէն:

Ու ինչ մեղքս պահեմ, երբեմն ալ մեր թաղին մէջ, ընկերներով կամ դրացի

տուններէն, յստակ կը լսուէին այս լեզունով խօսակցութիւններն ու նոյնիսկ անոնց երգած «չարքերները»: Տակաւին... թիվիներէն նաեւ կը դիտուէին ֆիլմերը:

Ու հակառակ այս բոլորին, մինչեւ այս տարիքիս իսկ, նոյն այս լեզուն «գործածելու» կամ անոր «զիմելու» կարելի թէ եւ հազուադէպօրէն զգացած եմ, բայց ամէն առիթով կը յիշեմ սա հաճելի միջոցառում, կապուած թրքախօսութեանս... աւելի ճիշդ՝ «թրքագիտութեանս»:

Այսպէս, տարիներ առաջ, աւելի ճիշդ՝ Դամասկոսի մէջ համալսարանական օրերէս մէկուն, երեկոյ մը, երկարատեւ, յոգնեցուցիչ դասերէ ետք, երբ քաղցով յարկաբաժինս կը վերադառնայի, ճամբուս վրայ արթնալու բազմութիւն մը ուշադրութիւնս կը գրաւէր:

Դէպի Մէքքէ գացող թուրք ուխտաւորներ էին, որոնք իրենց արար մեքենավորին հետ բարձրաձայն կը վիճէին: Այդ վայրկեանին, ինչո՞ւ ինքզինքնս անզգայաբար այս մարդկային ժխոր-քառսին մէջ նետած էի. մի՛ հարցնէք... չեմ գիտեր ինչո՞ւ...: Նաեւ տեսանելի էր, թէ ինչպէ՞ս արար մեքենավորը, զրեմէ կատարած, ամօրէն ընտած էր ուխտաւորի մը ձեռքը, որուն ափին մէջ սուրիական հարկերոց թիղադրամ մը կար: Միւս կողմէ, ուխտաւորին խմբակիցները կը փորձէին իրենց ընկերով օգնել ու ազատել անոր ձեռքը:

Ու յանկարծ, ինչ «հրաք», թիւով այդ հինգ յաճախորդները, զիս տեսնելով իրենց անօրինակ աղմուկը գաղթե-

● շար. Դ. Էջ

ՄԵԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սփիւռքահայ յայտնի մտաւորական աթթ. Հրայր ձէպէճեան համոզուած է, թէ Հայաստանի կապը պէտք է աշխուժանայ դասական սփիւռքի հետ:

Հայաստանի Հանրային հեռուստալայանը նախընթաց օր հեռարար հարցազրոյց մը սփռեց աթթ. Հրայր ձէպէճեանի հետ, որ, միեւնոյն ժամանակ, Աստուածաշունչի ընկերութեան Արարական ծոցի երկիրներու մասնաճիւղի ընդհանուր քարտուղարն է: Իր հետ զրուցեց հաղորդավարուհի Սօնա Գրիգորեան՝ մեկնակէտ ունենալով ձէպէճեանի յօդուածներէն մէկուն մէջ արտայայտած միտքը, թէ իւրաքանչիւր հայուն կը պատկանի մեծ պատասխանատուութիւն մը, որն է կերտել հայն ու հայրենիքը: Հարկ է նշել, որ այդ յօդուածը արդէն հրատարակուած է թերթին մէջ:

Հայաստանի դիմադրաւած անկախ գոյութեանական մարտահրաւերներն ալ հաշուի առնելով՝ հեռավար հարցազրոյցի ընթացքին Հրայր ձէպէճեան անհրաժեշտ նկատեց թօթափել ներքին թշնամական մթնոլորտը եւ առաջնորդուի սիրով, համերաշխութեամբ եւ իրերհասկացողութեամբ: Իր խօսքով՝ սա պէտք է վերածուի ռազմավարութեան մը, որպէսզի փոխադարձ հասկացողութեամբ, փոխադարձ յարգանքով ստեղծուի հանդուրժողականութեան մը մթնոլորտը, որ պիտի ըլլայ գրաւականը՝ առկա մարտահրաւերները յաղթահարելու:



Հայաստան-Ռուսաստան գործակցութիւնը զարգացնելու ջանքեր՝ ծանրարեռնուած օրակարգի պայմաններով

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԴԻՄԱՆ

Երեւան չի պատրաստուիր Մոսկուայի հետ յարաբերութիւններու վերաձեւաւորման՝ հակառակ դիրքորոշումներու տարբերութեան



Նիկոլ Փաշինեան կը գրուցէ Սերկէյ Լաւրովի հետ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան երէկ հիւրընկալեց Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովը, որ աշխատանքային այցելութիւն մը տուաւ Երեւան: Պաշտօնական աղբիւրներու հաղորդումներով, վարչապետը հանդիպման ընթացքին ողջունեց հիւր նախարարը եւ անդադարձաւ Երեւան-Մոսկուա յարաբերութիւններու ներկայ ընթացքին: Իր կարգին, Սերկէյ Լաւրով շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան արդիւններու հաղորդումներուն վերաբերող հարցերին: Իր կարգին, Սերկէյ Լաւրով շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան արդիւններու հաղորդումներուն վերաբերող հարցերին:

Լաւրով, որ աւարտեց Երեւանի շփումները, կեցողութեան ընթացքին ընդունուեցան նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանի կողմէ: Հայաստանէ վե-

լութեան ընթացքին Լաւրովի ընկերակից պատուիրակութեան մաս կազմեց նաեւ Ռուսաստանի արտաքին գործոց փոխ-նախարար Միխայիլ Գալուշչին:

Լաւրովի այցելութեան ընթացքին թէեւ փոխանկուեցան զրական պատգամներ, հիւրընկալութիւնը ջերմ մթնոլորտի մը մէջ էր, սակայն, անխուսափելիօրէն ի յայտ եկան Երեւան-Մոսկուա առանցքի դժուարութիւնները: Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանի եւ Սերկէյ Լաւրովի մամուլային տարախիսն ընթացքին հնչած յայտարարութիւնները այս առումով յատկանշական էին: Այսպէս, Լաւրով պնդեց, որ Ռուսաստան եւ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութիւնը (ՀԱՊԿ) անմիջապէս արձագանգած են Հայաստանի գլխավոր պնդումները: Այս կէտին վրայ Արարատ Միրզոյեան հակադարձեց եւ աւելցուց, որ Երեւանի օրակարգին վրայ

ընդարձին, ան այս շարքովի վերջին արդէն պիտի հիւրընկալէ արտաքին գործոց նախարար Հաքան Յիտանը: Երեւան այցե-



ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ ԵՒ ԱՐՇԻԼ ԿՈՐԲԻ ՇԵՌԱՅՈՒՄԸ ՍՓԻՌՔԱՀԱՅ ԳՐՈՂԻՆ

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ 98 տարեկանին մահացած է սփիւռքահայ մտաւորականութեան երէց սերունդի վերջին ներկայացուցիչներէն մէկը՝ գրող, թարգմանիչ, խմբագիր, վիպագիր եւ թատերագիր Սարգիս Վահագնը (Սարգիս Գաբրիէլ Փաթափութեան)։ Ան բնախօսութեան եւ բժշկութեան 2021 թուականի Նոպելեան մրցանակակիրն եւրէն մէկուն՝ Արտեմ Փաթափութեանի հայրն էր։


Փաթափութեանները ԱՄՆ փոխադրուած էին Լիբանանէն, տակաւին 1980-ականներուն։ Սարգիս Վահագն Հոն Հաստատուած, ապագրած է իր գործերուն մէկ մասը, ստացած իր մրցանակները, Հոն շարունակուած է սփիւռքահայ գրողին ճանաչումը, որ սկիզբ առած էր Լիբանանէն...

Վերջին տարիներուն իր տիկնոջ հետ, կամովի որդուժ մը ընդունելով՝ Սարգիս Վահագն փոխադրուած էր տարեցներու «Արարատ տուն»՝ զբաղեցնելով այնտեղի թիւ 204 առանձնասենեակը։ Կինը՝ Հայկուհի Աճէմեան, մահացաւ 2023 թուականին, իսկ Սարգիս Վահագն ալ կեանքէն հեռացաւ 19 մայիսին, ինչպէս յայտարարած է իր դուստրը՝ յետ կարճատեւ հիւանդութեան։

Հարկ է նշել, որ գրողը մինչեւ վերջ կ'ապրէր զբաղանքներով, ընթերցանութեամբ եւ իր ընթերցանութեան նիւթերու մէջ էր նաեւ ՃԱՄԱՆԱԿ թերթը, որ կը բանար համակարգիչով։ Երբեմն ան Եւսամաիով կապ կը հաստատէր, կարծիք, նկատառում կը յայտնէր ՃԱՄԱՆԱԿ թերթի այս կամ այն յօդուածի, նիւթի վերաբերեալ եւ ընդհանրապէս հաւատացողն էր հայ գիրին եւ քաջալերողը՝ արեւմտահայերէնով գրողին...

Սարգիս Վահագն ծնած էր Պէյրութ, 1927 թուականի հոկտեմբերի 7-ին, հաճնքի հօրմէն եւ շապինգարահիսարցի մօրմէն։ Նախնական ուսումը ստացած է Լիբանանի Աբգարեան եւ Սահակեան վարժարաններուն մէջ, երկրորդականը՝ շարունակած տեղւոյն Փրանսական լիսէն, ապա աւարտած է Առեւտրական ճիւղը 1945 թուականին։ Կանուխէն սիրած է գիրն ու զբաղանքները։ Նախ փորձած է բանաստեղծութիւններ գրել, բայց շուտով տարուած է արձակի, գլխաւորաբար պատմութեան ժանրով։ Յիսունական թուականներէն սկսեալ մաս կազմած է այլազան զբաղանքներու մշակութային խմբակներուն։ Գործուն մասնակցութիւն բերած է Պէյրութի «Գրական շրջանակ»ի կազմավորման եւ անոր յետագայ գործունէութեան։

Սարգիս Վահագնի գրութիւնները, 1954 թուականէն սկսեալ, հնագիտէ լոյս տեսած են «Մշակոյթ», «Լուսաբեր», «Նոր



Գիր», «Անի», «Շիրակ», «Գարուն», «Նաւասարդ», «Կամար» եւ «Առագաստ» զբաղանքներուն մէջ։

Վաթսուական թուականներու կէսէն մնացուն կերպով աշխատակցած է «Շիրակ» ամսագրին եւ ապա շուրջ տասը տարի, մինչեւ 1986 թուականի մեկնումը, մաս կազմած է անոր խմբագրական կազմին, վարելով միջազգային զբաղանքներուն բաժինը։ Գրականութեան աղբիւրը, ան լուրջ հետաքրքրութիւն ցոյց տուած է նաեւ շարժանկարի եւ թատրոնի արուեստներուն նկատմամբ։ 1958-1959 թուականներուն, Պէյրութի մէջ հրատարակած է սփիւռքի պատմութեան մէջ աննախագէտ երեւոյթ հանգիստացող «Նոր Սինեմա» շարժանկարային արուեստի պարբերագրերը։

2008 թուականին արժանացած է Ամենայն Հայոց Տ.Տ. Գաբրիէլ Բ. Կաթողիկոսի շնորհած «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին եւ Սփիւռքի նախարարութեան «Ուրիշմ Սարգիս» շքանշանին։ Ամուսնացած է ուսուցչուհի, կրթական գործիչ Հայկուհի Աճէմեանի հետ, ունեցած են երեք զաւակներ՝ Հուրի, Արա եւ Արտեմ Փաթափութեաններ։ Գիտնական է նաեւ անոր միւս որդին՝ Արա Փաթափութեանը։ Իսկ դուստրը՝ Հուրի Փաթափութեանը, աշխատած է Լիբանանի «Նշիւն Մանու-

կեան» ազգային վարժարանին մէջ, իրեն ուսուցչուհի։

Սարգիս Վահագնի լոյս ընծայած երկերն են՝ «Մատանիներ», պատմութեան (Պէյրութ, 1969), արժանացած «Հայկաշէն Ուղունեան զբաղանք մրցանակ»ին։

«Արմատներ», պատմութեան (Երեւան, 1981)։

«Նայիրեան մորմոր», թատերգութիւն (Պէյրութ, 1982), արժանացած «Ալեք Մանուկեան զբաղանք մրցանակ»ին։

«Անտ որդիմ», թատերգութիւն (Լոս Անճելես, 1991)։

«Ճագնաք», պատմութեան (Լոս Անճելես, 2000)։

«Արշիլ Կորբի», վէպ (Լոս Անճելես, 2004), արժանացած «Հայաստանի Թէքեան մշակութային միութեան զբաղանք մրցանակ»ին, ինչպէս նաեւ՝ «Հայկաշէն Ուղունեան զբաղանք մրցանակ»ին։

«Գրական համաստեղութիւն, զանազան փորձարկութիւններ, զբաղանքներ» (Լոս Անճելես, 2008)։

«Շուրջ» ոչինչ», թարգմանութիւն՝ Արմէն Լիւպին-Շահան Շահնուրի Ֆրանսերէն ամբողջական բանաստեղծութիւններուն (2010)։

«Մաղկաբաղ» պատմութեան (գրեթէ ամբողջական իր պատմութեան շաւաքածոն, 2017)

«Հաճըն սիրուն», վէպ (Լոս Անճելես, 2017)

«Արշիլ Կորբի» արեւելահայերէնի վերածուած (Երեւան, 2022)

«ԱՐՇԻԼ ԿՈՐԲԻ»Ն՝ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԷՊ

Սարգիս Վահագնը մեծ փափաք ունէր, որ մօտ քսան տարի առաջ հրատարակած իր վէպերին մէջը՝ «Արշիլ Կորբի»ն, արեւմտահայերէնէ փոխադրուի արեւելահայերէնի։ Ան ուրիշ լեզուներու թարգմանել տալու մասին չէր մտածեր, քանի որ վէպին նիւթը, ոգին, բառապաշարը շատ հայկական կը նկատէր, եւ մտաւախութիւն ունէր, որ այլ լեզուով հնարաւոր չէ այդ մէկը ճշգրիտ փոխանցել։ 2022 թուականին Երեւանի մէջ վերջապէս լոյս տեսաւ այդ վէպի արեւելահայերէն տարբերակը։ Հեղինակը շատ գոհ էր այդ հրատարակումէն եւ իր շնորհակալութիւնները կը յղէր փոխարդոյններուն (Արմէն Սարգսեան եւ Անուշ Ներսիսեան), հրատարակիչին (Ներսէս Տէր-Վարդանեան), գիրքի ձեւաւորումը հաւանած էր եւ ընդհանրապէս ուրախ էր, որ վերջապէս Հայաստանի մէջ զայն լոյս տեսաւ։

Այս վէպի հիմքին մէջ Սարգիս Վահագն գրած է հայրենիքի, ընտանիքի գաղափարը եւ զայն կը ներկայացնէ աշխարհահռչակ մեծանուն նկարիչ Արշիլ Կորբի կենսագրութեան միջոցով։ Հեղինակը վէպի նախաբանին մէջ կը գրէ, թէ միտուած է ներկայացնելու. «Կորբի վտարանդի հայ մարդուն Գողգոթան...»՝ հաւատարիմ մը-նալով անոր ոգիի վե-

նութեան։

Գրողը վէպը գրած է եօթ տարուայ մէջ, եւ նուիրած է Կորբի ծննդեան 100-ամեակին։ Իսկ ընդհանրապէս, Սարգիս Վահագն, իր գիրքերուն մեծ մասը ձօնած է իր կողակցին, ընտանիքին... Այս գիրքը գրելու մէջ մեծ ներդրում ունեցած է իր բնաանիքը, որ գրողին հետ միասին ապրած է Կորբիով։

Արշիլ Կորբի մասին գրելու գաղափարը Սարգիս Վահագնին հանգիստ չէ ձգած տակաւին Լիբանան ապրած տարիներուն։

1980-ականներուն Սարգիս Վահագն պատահաբար փարիզեան «Էքսպրէս» շաբաթաթերթին մէջ կարդացած է Շնայտէր անունով արուեստի քննադատի մը մէկ յօդուածը, որ ան Կորբին կը ներկայացնէր իբրեւ հրեայ։ Այդ մէկը վիրաւորանք եւ նաեւ ներքին ընդվզում ծնած է եւ գրողը սկսած է աւելի մօտէն ուսումնասիրել ներկարչի կեանքը, արուեստը, անոր հոշակին արձագանգները՝ աշխարհին մէջ։ Նոյն այդ օրերուն Պէյրութի մէկ գրախանութի ցուցափեղկին յայտնուած է Արշիլ Կորբի կեանքին ու արուեստին նուիրուած պատկերագիրք մը, զոր գնած է անմիջապէս եւ չքեղ այդ հատորի միջոցով ալ աւելի մօտէն ճանչցած է հայ արուեստագէտը։ Վէպ գրելու գաղափարը յայտնուած է աւագ, սակայն պատերազմական Պէյրութը ընաւ տրամադրող չէր նման գաղափար մը իրականութիւն դարձնելու համար։ Երբ 1986-1987-ին կ'որոշէն տեղափոխուի Ամերիկա, Հոն ալ ամէն ինչ կը սկսի սկիզբէն. նախ կը սկսի հաւաքել Արշիլ Կորբի մասին հրատարակուած գիրքեր, նիւթեր, կը փնտռուէ փաստաթուղթեր, վաւերագրեր։ Վէպի մը գրողին կը հետաքրքրէ նիւթին մասին ամէն ինչ, քանի որ ան մտադրուած էր տալ Կորբի կենսագրական սկիզբէն մինչեւ վերջ, մինչեւ անոր ողբերգական մահը։ Ինչպէս յայտնի է Կորբի անձնապատմութիւն կատարած էր 1948 թուականի՝ ընտանեկան ծանր պատմութեան, անբուժելի հիւանդութեան եւ կարգ մը այլ իրողութիւններէ գրողուած։

Երբ Սարգիս Վահագնի մեծ որդին՝ Արան, կը հաստատուի Պոսթըն, այդ մէկը պատճառ կ'ըլլայ, որ որդին այցելելու առիթներով նաեւ Պոսթընի մէջ պրպտումներ կատարէ։ Ընտանիքի անդամները միւս կողմէ կ'աջակցին եւ նորանոր նիւթեր գտնելով կը փոխանցէին հօրը։ Արան իր ընտանիքին հետ ճանապարհորդութիւն մը կը կատարէ իր հօր եւ մօր հետ՝ դէպի Նիւ Երոք, եւ միասին կը ծանօթանան այն միջավայրին եւ միջոցաւորին հետ, ուր ապրած է Կորբին։ Գրողը կը տեսնէ նկարչին բնակարանը, երկար կը բալէ այն փողոցներով, ուր կը սիրէր գրօնել Կորբին, կը նստի այն սրճարաններուն մէջ, ուր նաեւ նկարիչը նստած էր... Ծանապարհորդութիւնը կը շարունակուի դէպի Քոնեքթիքէտ հանգի Շերման գիւղաքաղաքը, ուր իր առաւապալիք կեանքին վերջ տուած է Կորբի։ Անոր ապրած բնակարանը այդ ժամանակ երիտասարդ ամերիկուհի մը կը պատկանէր, որ արտօնած է շրջիլ տունին մէջ, ինչ որ սքեզալայր կը թուէր գրողին...

Միւս որդին՝ Արտեմ Փաթափութեանը, բնակելով Ման Ֆրանսիսքո, հօր ամէն այցին նոյնպէս կ'առաջնորդէր այն վայրերը, որոնք Կորբին կենսագրութեան հետ առնչութիւն ունեցած են։

Գրողը եղած է նաեւ այն չէնքին մէջ, ուր Կորբին ամուսնացած է Ակնէսին հետ։ Սարգիս Վահագնը ամիսներով ապրած է Կորբի միջավայրին մէջ, եւ պատահական չէ, որ վէպի յառաջաբանի հեղինակ Երանդ Ազատեան կը գրէ. «Վարելի չէ կուհի, թէ այս գործին մէջ ուր կը վերջանայ Կորբին եւ ուր կը սկսի Սարգիս Վահագնը»։

Կորբի ծանր մանկութիւնը, մօր կորուստը, անշուշտ, մեծ ազդեցութիւն ունեցած են նկարչի վրայ, սակայն Սարգիս Վահագն փառահէ, որ նաեւ Ակնէսի հեռացումը, հիւանդութիւնը եւ արուեստանոցին հրդեհը մեծ պատճառներն էին անոր մահուան...

«Արշիլ Կորբի» վէպը միայն նկարչի մասին չէ, այլ ամերիկեան արուեստի միջավայրի նկարագրութիւնն է նաեւ, ուր մեծ ջանքերով իր տեղը հաստատած էր հայ արուեստագէտը, բայց նոյն միջավայրը նաեւ կործանած է գինը...

Երեւան



ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆԻ ՄԱՍԻՆ

Սարգիս Վահագնի գրելակերպը պարզ է, սահուն առանց ճիգի եւ գրականութիւն ընկելու մարմաջի։ Այսինքն, իրաւ գրողի մը հետ գործ ունիք հոս։ Նախադասութիւններուն կարուածքը շնորհալի է։ Երբ մէկը որ գիտէ գրել. «Հիմա աշուն է մեր փողոցին մէջ, Լիբանանի կանաչ ու խեղճ աշունը։ Գարնան օրերուն պէս թարմ են խոտերը, իսկ քաղաքապետական ծառերն այլ նազանքով կ'օրօրեն իրենց մութ կանաչը։ Բայց գարունը այնքան հեռու է մտածումէս։ Իրիկնամուտը որ կ'իջնէ շրջակայ տուններուն վրայ, այնպէս ցուրտ է ու գորշ, որ ես ձմեռը կը յիշեմ ու կը տխրիմ ակամայ»։ Ուղղակի հնաշալի է։

Ջորճ Որբունի
«Աշխարհ», թերթ, հոկտեմբեր 1970, Փարիզ

...Շնորհակալութիւն «Մատանիներ»ը ինծի զրկելու համար։ Կէս մը հիւանդանոց, կէս մը տունը կարդացի։ Լաւ էր։ Լեզուդ ալ լաւ է։

Աւերիւրգարանութիւններէ գերծ։ «Խնձոր» գիրքի էն տպաւորիչ մասն է ինծի համար։ Համակ բանաստեղծութիւն է։ Ձայն կարդալով լացի եւ կրկին պիտի կարդամ։ Լիբանանէն երբեմն կու գան գիրքեր՝ որոնք իրենց թուովը չեն արժիր։ Քուկուկը երջանիկ բացառութիւն էր։


Արամ Հայկազ, յունիս 11, 1970, Նիւ Երոք (նամակ)

Հարցը այն չէ, թէ Սարգիս Վահագն երկար տարիներ ծառայած է հայ գրականութեան։ Շատայոյններու թիւը հըսկայ է։ Հարցը այն է, թէ այդ ծառայութիւնը այնպիսի որակով եղած է որ հըպարտութիւն կը բերէ ազգին։ Իր գործերէն որեւէ հատոր, որ ձեռքս առնեմ եւ պատահաբար էջ մը բանամ գիտեմ, որ հանդիպով պիտի կարդամ, որովհետեւ ոչ միայն հարուստ լեզու մը պիտի գտնամ եւ խոր մտածողութիւն, այլ՝ զբաղանք գեղագիտութեան մը արուեստը։

Երբ մարդ կրնայ իր միտքը, հոգին եւ սիրտը ազամանդի թիւերով կապել եւ իւրայայտուի կերպով շղթայուած խօսքեր հրամցնել ընթերցողին՝ ստեղծագործական հրաշքը կատարուած է։

Վահագնի վերջին գործերէն, Շահան Շահնուրի «Շուրջ» ոչինչ» բանաստեղծութիւններու Ֆրանսերէնէն թարգմանութիւնը կենսագրութեան հետ առնչութիւն ունեցած էր։ Վահագնի մէջ կայ արտակարգ, բացառիկ հակացողութիւն մը իրաւ զբաղանքութեան արժեքին հանդէպ։ Ես միայն ընտրեալ մարդոց մէջ տեսած եմ այդ յատկութիւնը։

Ալիսիա Կրակոսեան
Կլենտէյլի Կեդրոնական գրադարանի մէջ ելոյթ
Մայիս 31, 2007, Կլենտէյլ



ԹՐԻՓԳԱՌՈՒԻ ԼԵԻՈՆ–ՎԱՐԴՈՒՀԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԵՐՈՒՆ ՇՐՋԱՅՑԸ



Խմբակար մը Գուգկունճուֆի եկեղեցւոյ մէջ (Լուսակարը՝ դպրոցէն)

Թրփգարուի Լեւոն–Վարդուհեան վարժարանի աշակերտները նախընթաց օր այցելեցին Գուգկունճուքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Գանտիլիի Ս. Երկոտասան Առաքելոց եկեղեցիները։ Խումբը գլխաւորեցին Թրփգարուի Ս. Նիկողայոս եկեղեցւոյ թաղային խորհուր-

դի ատենապետ Նուրհան Սուճուհեան եւ Լեւոն–Վարդուհեան վարժարանի տնօրէնուհի Անիթա Թուճաճեան։ Այս ուղեւորութեան նպատակն էր աշակերտներուն ծանօթացնել Վստփորի Ասիական ափի մեր սրբավայրերը։ Երկու եկեղեցիներուն մէջ ալ տղաքը

ջերմ միջնորդութիւն մը մէջ դիմաւորուեցան՝ մասնաւորապէս, որ Գուգկունճուքէ ներս Տ. Թէոդիկ ԲՀՆյ. Ձեթիքայա հետաքրքրական տեղեկութիւններ փոխանցեց անոնց։ Շրջայցի աւարտին բոլորը դրական տպաւորութիւններով վերադարձան Թրփգարու։

ՃԿՈՒՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԵԴՐՈՆ

● Զար. Ա. էջէն

բար պիտի «կլանեն» զանոնք։ Սակայն, այս մօտեցումը չի համապատասխաներ ժամանակակից երիտասարդութեան ակնկալութիւններուն։ Այսօրուան նոր սերունդը կը փնտռէ իմաստ, ինքնութիւն, տարածք, ուր իր ձայնը նշանակութիւն ունի։

Երիտասարդները իսկապէս ներգրաւելու համար պէտք է սկսիլ լսել զանոնք։ Ո՛չ միայն անհատական գրոյցներով, այլեւ հետեւողական հարցադրումներով, հետազոտութիւններով՝ հասկնալով, թէ ի՞նչ ակնկալութիւններ ունին համայնքէն, եկեղեցիէն, կուսակցութիւններէն, միութիւններէն եւ, ընդհանրապէս, հայկական կազմակերպութիւններէն։

Այս գործընթացը կրնայ շօշափելի կերպով կարգործել՝ ստեղծելով երիտասարդական խորհուրդներ, կազմակերպելով բաց ֆորումներ եւ քննարկումներ, ուր պատանիներու եւ երիտասարդութեան ձայնը ո՛չ միայն կը հնչէ եւ կ'արձանագրուի, այլեւ կը դառնայ առաջնորդող ուղեցոյց։

ՆՈՐ ՄԵԹՈՏՆԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆ ԴԻՆ ՀԱՄԱՐ

Համայնքներու ապագան կախեալ է նոր սերունդէն, որ այսօր լուռ է, բայց, ունի ձգտում եւ տեսլական։ Կառոյցները չեն կրնար ըլլալ միայն բեմ, ուր երիտասարդները կը լսեն, այլ հարթակ՝ ուր անոնք կը խօսին։

Անհրաժեշտ է ստեղծել առցանց եւ արհեստագործական հարթակներ՝ խթանելու կապեր եւ համագործակցութիւն։ Միայն ֆիզիքական ներկայութիւնը այլեւս բաւարար չէ՝ այսօրուան ժամանակակից երիտասարդին հասնելու համար։

Երիտասարդներուն համար պէտք է մշակել անձնական եւ մասնագիտական զարգացման ծրագիրներ. օրինակ՝ հիւր խօսողներու մասնակցութեամբ քննարկումներ, ձեռնարկատիրութեան ու ինքնարտայայտման աշխատանոցներ, որոնք կ'ամրացնեն կապը ազգային պատկանելիութեան եւ անհատակերտումին միջեւ։

Սփուռեան կառոյցներն ու կազմակերպութիւնները, «ազգային ծառայութիւն», «յանձնառութիւն» եւ «պարտականութիւն» քարոզելէ առաջ, նախ մարդ կերակրով պէտք է զբաղին. նկարագիր եւ ինքնութիւն ձեւաւորելու մասին մտածեն։ Երիտասարդը պէտք է

զգայ, որ ինք դեր ունի համայնքին մէջ, ոչ թէ միայն ունկնդիր է։ Երիտասարդները ներշնչել, լիցքաւորել եւ ուղեկից ըլլալ անոնց որպէս գործակիցներ։ Երիտասարդը պէտք է զգայ, որ ինք համայնքի ձեւաւորման մասնակից է, ո՛չ միայն ստացող։

Ճկուն եւ երիտասարդակերտ մօտեցումները պէտք է առաջնորդուին ո՛չ թէ ծրագրերու քանակով, այլ անոնց ազդեցութեամբ։ Հարցը այլեւս «ինչպէ՞ս անոնք կրնան մեզի միանալ»ը չէ, այլ՝ «ինչպէ՞ս մենք կրնանք իմաստալից ըլլալ անոնց աշխարհին մէջ»ն է։

Վերջերս Վարազ Գեթնեմանեան (3) լիբանանահայ համայնքի հիմնական խնդիրներու մասին դիպուկ յօդուածի մը մէջ մտաւ վերջին վրայ դրած էր։ Այսօր յստակ տեսանկի է, որ հաստատութեան համակարգը անկարող է նոր հայեցակարգեր ձեւաւորելու։ Ան «կը շարունակէ շարժիլ աւանդույթի ուժով միայն, հանրային, համայնքային եւ ազգային կեանքը սահմանափակելով հետաքրքրութիւններու շատ նեղ եւ շատ յաճախ ժամանակավիճակ օրակարգերով», կ'ընդգծէ տքթ. Գեթնեմանեան։ Շատեր, դժգոհ համակարգի մտաւորական պարապութենէն, կը ձգտին դուրս գալու անոր սահմաններէն՝ արտերկր նոր տարածքներու մէջ։ Սակայն, անոնք կը բախին կարծրացած ինքնութեան չրջանակներու, որոնք արեւելք կը հանդիսանան նորարարութեան։

Եթէ եկեղեցին, կուսակցութիւնները եւ համայնքային մշակութային, ուսումնական եւ բարեփոխական կազմակերպութիւնները իսկապէս լուրջ են իրենց առաքելութեան մէջ, ապա անոնք պէտք է դուրս գան միապաղաղ աւանդութիւնը սահմաններէն, ընդարձակեն իրենց տեսլականը եւ ստեղծեն այնպիսի ներառարական ու ստեղծագործ միջավայրեր, ուր երիտասարդութիւնը կրնայ յայտնարեւել իր դերը, արտայայտել իր ձայնը եւ ի գործ դնել իր կարողութիւնները։

* Տքթ. Հրայր Զիլինկերեան, ընկերաբան, սփուռագէտ, հայկական հաստատութեան նորարարութեան ծրագրային հեղինակ եւ գործադիր։

(1) <https://shorturl.at/XcNUG>

(2) «Հայկական սփուռքի հարցախոյզ», Armenian Diaspora Survey, 2019, 2021, 2022։

(3) «Ազգակ», 14 ապրիլ 2025։

ՓՐԿԵԼ ՈՒՍՈՒՑԻՉԻ ԱՐԴԷՆ ԻՍԿ ԲԵԿՈՒԱՇ

● Զար. Բ. էջէն

տայալտութիւն ըսես չեն ունենար։ Տակաւին չեմ խօսիր հեռատեսիլային ծրագրերներու մասին, որոնք պարզապէս կը ծառայեն տգիտացնելու ու անկիրթ եւ անդատարակ հասարակութիւն մը ունենալուն։

Դարձեալ կը կրկնեմ, առաջին յանցաւորը այս բոլորին մէջ ծնողքը ինքն է, որովհետեւ եթէ երեխան, պատանին եւ երիտասարդը իր հօրմէն ու մօրմէն չսորվի ուսուցիչները յարգել, ուրիշ ո՛չ մէկ տեղէ եւ ո՛չ որ կրնան իրենց այդ յարգանքը սորվեցնել։ Իսկ որպէսզի ծնողքը կարենայ այդ դատարակութիւնը տալ, ինք կարելի ունի դատարակութեւնը...

...որպէսզի հասնին, այլ իմքնէ, որ առաջին հերթին իր զաւակին ուսուցիչը-դատարակը ինքն է, եւ ո՛չ որ կրնայ իր տուածը տալ իր զաւակներուն։ Ձարեհ Արք. Ագնաւորեանը այս մասին կը գրէ. «Մտողներ բնաւ պէտք չէ մտնան մէկ բան, թէ իրենց զաւակին դատարակը ո՛չ զգրոցն է, ո՛չ ուսուցիչը եւ ո՛չ քահանան, այլ իրենք իսկ։ Անոնք կրնան օժանդակ ըլլալ պարզապէս, իրենք կը մնան տիրակալներ։ Ունէ զաւակի դատարակը ծնողքը ինքն է։

Միշտ այ այժմէական է ծնողներու ու չաղրութեան բերուած դատարակաչափ սա ուղեղգծը. «Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որպէսզի իր ծնրութեան ատեն այ չխտորի անկէ» (Առ 22,6)։

Ինչ կը վերաբերի ուսուցիչներուն, ապա ծնողները պէտք է բացատրեն իրենց զաւակներուն, որ անոնք իւրայայտուկ մարդիկ են, որոնք կ'օգնեն իրենց հասակ առնելու, գիտութեամբ աճելու ու զարգանալու։

Դարձեալ դիմենք Ձարեհ Սրբազանին, որ մեր հաւատքի հօր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն սող մը մէջընթաց, գեղեցիկ բացատրութիւն մը կու տայ ուսուցիչի ինչութեան մասին։ Կարգանք. «Ս. Գրիգոր Լուսաւորիչ, մեր հաւատքի ուսուցիչը, գեղեցիկ խօսք մը ունի իր Վարդապետութեան մէջ. «Սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքելութիւն կանոն աշակերտելոցն դնել, մասնաւոր յուշ առնելով զՏէրու նախնան... «սակաւ Յիսուս առնել եւ ու-

սուցանել»։ «Ճշմարիտ ուսուցիչներուն սովորութիւնն է՝ իրենց անձնական օրինակը տալ իբրեւ ուղեցոյց աշակերտներուն, մասնաւոր յիշեցնելով Տէրոջ օրինակը... «Յիսուս սկսաւ կատարել եւ ուսուցանել»։

Այնքան ճշմարիտ են այս բառերը։ Ճշմարիտ ուսուցիչը տեսութեամբ չէ որ կրնայ սորվեցնել, այլ գործըով։ Ճշմարիտ ուսուցիչը կը սորվեցնէ ո՛չ այնքան խօսքով, որքան իր անձին օրինակով։ Եւ որքան ճշմարիտ եւ վաւերական է օրինակը, այնքան զօրեղ է ձգած դրոշմը եւ գերազանց՝ արդիւնքը։ Այո՛, ճշմարիտ ուսուցիչը ինք իր անձով բաց դատարակ մըն է. եւ նոյնիսկ եթէ գրեթէ դատարակ խուսափին աշակերտին մարմնի թէ միտքի աչքերէն, ուսուցիչին անձը եւ իր անձով մատուցածը անկարելի է որ խուսափին աչքերէն ու միտքերէն»։

Աւարտենք Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուսուցիչներուն ուղղած հայրական խօսքերով։

* Սիրելի՛ ուսուցիչներ, ձեզի վիճակուած է կեանքի առաջնորդելու անդրանիկ քայլերը մեր մանուկներուն ու պատանիներուն, անոնց առջեւ բանալու իմացութեան դռները՝ անոնց կուրծքին տակ կրթելով նաեւ ծնողանէր ու մարդասէր սիրտ, հայրենապաշտ ու առաքինազարդ հոգի։ Ձեր նուիրումով ու հաւատաւոր ընթացքով, ձեր հոգածու ձեռքով սերմանուած հուսերը բարի պտուղներ պիտի բերին մեր ազգային կեանքի անդատաններուն մէջ։ Արդարեւ, մենք է ուսուցիչին առաքելութիւնը, եւ երանք՝ անոր, ով մենք կ'ըլլայ այդ առաքելութեան մէջը։

* Ուսուցիչ ըլլալը մենք պատիւ եւ պատասխանատուութիւն է։ Ան կը նշանակէ պատասխանատուութիւն կրել ազգի լինելութեան, այդ լինելութեան որակի համար։ Մեր ժողովուրդը իր գոյութեամբ պարտական է հայ ուսուցիչին։ Եւ փա՛ռք Աստուծոյ, այն պատմութիւնն ու մշակոյթը, որով կը հպարտանայ մեր ազգը, կերտուած են հայ ուսուցիչի ոգիին ու միտքին շնորհիւ, անոր տուած կրթութեան ու դատարակութեան արդիւնքն են։

19 մայիս 2025, Վաղարշապատ

Ամէն օր ՃԱՄԱՆԱԿ կրնաք գտնել՝

NOSTALJI KİTAP&KAHVE

Ergenekon Cad. Tayyareci Fehmi Sok. No:12-14/C Pangaltı

ՊԱՏՄԱԿԱՆ

● Զար. Ա. էջէն

ցուցին։ Հիմա, բոլորն ալ դիւ կը դիտէին ապշահար։ Իրենց աչքերէն կարելի էր կարդալ. «այս մարդը ուրիշ՞ բուսաւ»։ Հարցումը։ Իսկ ես, առանց իրար անցնելու, առաջին իսկ հերթին, արաբերէնով, մեքենավարին հարցուցի, թէ «բանն ինչո՞ւմն էր»։ Խեղճ մարդը, քրտնած, յոգնած ու հեւալով եւ ընդգլկելով բացատրեց, թէ ուխտաւորները իր իրաւունքը չէին տուած։ Աւելին՝ անոնց մօտ ալ միայն «հարկերնոց» ըլլալով ինք կը փորձէր նախ «մանրել» այդ մեծ դրամը։ Եւ ահա՛ անհասկացողութիւն։

Հարցը, թերեւս ինծի համար շատ պարզ էր, բայց ո՛չ վիճողներուն։ Թէեւ բոլորն ալ լուած եւ անհամբեր իմ որոշումին կը սպասէին, սակայն մէջս կարծես տեսակ մը ինքնածին վախ մըն ալ կար, չես գիտեր ինչու։ Ուստի, հարցին քաղաքական ըլլալով, նախ ինքզինքս փորձեցի հաւաքել եւ ապա բսելիքս հայերէնով մտքին մէջ դասաւորելէ ետք, ճարտարած թրքերէն բառամը-թրքաւորներէն եւ կապակածու, ինծի սկսած էին նայիլ, թէ այս մարդը ի՞նչ ըսաւ...։

Փորձած էի բացատրել, որ նախ դուք այդ մեծ գու-մարը տուէք, որ խեղճ մարդն ալ զայն մանրէ եւ վրադիրը ձեզի տայ։ Մտքիս մէջ, թրքերէնով բսելիքս, հայերէնովս այսպէս դասաւորած էի։ Բայց... եկուր տես որ...։ Ձեմ յիշեր այդ վայրկեանին ի՞նչ եւ կամ ինչպէ՞ս դիւ հասկացաւ։ Միայն այն գիտեմ, որ բոլորն ալ զարմացած են կապակածու, ինծի սկսած էին նայիլ, թէ այս մարդը ի՞նչ ըսաւ...։

Բայց, վայրկեանին կը կարճէի, որ արդէն իմ բառերովս հարցը լուծած էի, առանց անդրադառնալու, որ նոյն այդ անիծեալ անհասկացողութիւնը իմ ապիկաւութեանս շնորհիւ, առաւել բարդացած էր։ Որովհետեւ, իբրեւ «պարծենկոտ» նապաստակ, կը կարճէի որ անպէս լաւ եւ յստակ ձեւով բացատրած էի միտքս եւ խնդրել լուծած։ Բայց, միւս կողմէ ալ երբեք մտքես չէի անցուցած, որ թրքերէն արտասանած նախադասութիւնս իրապէս որ անիմաստ «բան» մըն էր։ Ան-հասկնալի։ Բարբախտաբար արագ մը կուահցի, որ ըսածս կացութեանն ոչ մէկ «բան» կրցած էր փոխել, որովհետեւ չիմո՛ւ նախադասութիւն մըն էր, անտեղի, եւ նոյնքան ալ... խալտալութ։ Ուստի որոշեցի խոյս տալ։ Անեղեւութեանս։ Վիճաբանութեան դաշտէն փախիլ։ Առաւել, ծիծաղելի չդառնալու համար՝ «չոգիանալ»։

Ձեմ յիշեր ինչպէ՞ս եւ որքան արագ անհետացայ։ Միայն այն գիտեմ, որ խումբը կրկին վերադարձած էր իր նախկին իրավիճակին, իր աւելի սուր վիճաբանութեան։

–Շօ՛, ես ո՛ր... Թրքերէն գիտցող կամ խօսողը ուր... կ'ըսէի մտովի... ինծի ինչ... ինչո՞ւս պէտք... ինքնա-կոչ թարգման ըլլալս պակաս էր... ան ալ թրքերէնի... վրաս գրէ...։

Հաստատապէս... միջնորդութիւնս ձախողած էր, որովհետեւ, նաեւ ձախողած էի թրքերէն բառադիտութեանս մէջ։

*

Երկար տարիներ սահած են այս միջադէպին վրայէն ու ամէն անգամ երբ յիշեմ, կամ հաճաքով այցելուններու սկսիմ պատմել, գէմբիս վրայ լայն ժպիտ մը կը բացուի։ Ու այդ վայրկեանին միշտ մտովի կը մէջըն-բեմ. «որքան լեզու գիտնաս... այնքան աւելի մարդ ես...» ժողովրդական նշանաւոր սա առածը։

Կարծեմ ակնարկութիւնս, ինծի ալ կանուխէն պէտք է հասցէագրելի...։